ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10. 1965 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՕՍՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» (16—17-ՐԴ ԴԴ. ԿԱՆՈՒՆՆԱՄԵՆԵՐ),

ԳԱ հրատարակչություն, 1964, 137 էջ

Հայրենի և արտասահմանյան պատմագրությունը նշանակալի հաջողություններ է հասել հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության ասպարեզում։ Սակայն, չնայած դրան, մինչև այսօր էլ մեր ժողովրդի բազմադարյան պատմության շատ հարցեր դեռ սպասում են իրենց սպառիչ պատասխանին։ Դեռևս բաց են մնում կես հազարամյակ շարունակ սուլթանական լծի տակ տառապած արևմտահայերի, առավել ևս Արևմտյան Հայաստանի ոչ միայն միջնադարյան, այլև նոր շրջանի պատմության շատ հարցեր։ Ուսումնասիրողներից շատերը տեղյակ չլինելով թուրքական և եվրոպական աղբյուրներին, հենվելով միայն հայկական նյութերի վրա, չեն կարողացել և չէին էլ կարող երկրի սոցիալ-տնտեսական կացության մասին վիճարկություն չվերցնող պատկերացումներ տալ։

Պատմաբանը այսօր չի կարող բավարարել խստապահանջ ընթերցողին, եթե գիտական շրջանառության մեջ չի դրել նորահայտ վավերագրեր, եթե դրանց հիման վրա չի կատարել համոզիչ ընդհանրացումներ։

Ցավոք, արևմտահայերի պատմությունն ուսումնասիրողի համար այդ պահանջը իրականացնելն ուներ և, որոշ իմաստով, այսօր էլ ունի արհեստական դժվարություններ։ Առաջին համաշխարհային սպանդի տարիներին բնաջնջված ավելի քան մեկ միլիոն արևմտահայության հետ միասին ոչնչացվեցին կամ բռնագրավվեցին նրա անցյալին վերաբերող արժեքավոր վավերագրեր։ Ապագա հաշվեհարդարից երկնչող թուրք պատմաբաններն ու քաղաքագետները թաքցնում էին հայ ժողովրդի անցյալ ու առօրյա պատմությանը վերաբերող պատմական կարևոր փաստաթղթերը, փորձում էին կեղծել կամ նենգափոխել իրողությունը, թյուրիմացության մեջ գցել համաշխարհային հասարակայնությանը։

Չորս տասնամյակ անցնելուց հետո միայն, թուրք պատմաբանները ստիպված եղան, վերջապես, հրատարակել իրենց արխիվներում պահված, միջնադարյան Թուրքիայի ու հպատակ այլազգիների պատմությանը վերաբերող «օրենքների ժողովածուները» (Կանուննամեներ)։ Դրանով իսկ մեկընդմիշտ ցրվեց այն առասպելը, թե Ասիայի ու Եվրոպայի ժողովուրդներին ստրկացնող թուրքերը ղեկավարվել են միայն ամեն իմաստության աղբյուր ճանաչված «Ղորանով» և օրենսդրություն չեն ունեցել։ Ակնհայտ դարձավ, որ ռազմա-լենային սիստեմին կառչած ֆեոդալական Թուրքիան, սուլթանները ու նրանց պալատականները նույնիսկ բավարար ժամանակ են տրամադրել հպատակներին կեղեքելու միջոցներն ու չափերը պետական օրենքների վերածելու համար։

«Օրենքների ժողովածուների» հրատարակությունը մեզ հնարավորություն է տալիս հերքել թուրք պատմաբաններին թուրքական իսկ աղբյուրների միջոցով։

Բայց կազմված լինելով հին թուրքերենով, այդ պատմական նյութերը անմատչելի էին մնում մեր ընթերցողների և հետազոտողների համար։ Անհրաժեշտ էր դրանք թարգմանել և հրատարակել։ Այդ կարևոր խնդիրը իրականացրին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը և արևելագիտության սեկտորը։ Վերջին տարիներս «Նյութեր Արևելքի ժողովուրդների պատմության» մատենաշարով լույս տեսան անվանի թուրքագետ Արամ Սաֆրաստյանի «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուի երկու հատորները, Հ. Նալբանդյանի «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» ժողովածուն։ Այդ մատենաշարը համալրվեց նաև «օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում» ժողովածուով, որը կազմել, թուրքերենից թարգմանել, ծանոթագրել ու համառոտ առաջաբանով հրատարակել են Ա. Սաֆրաստյանը և Մ. Ջուլալյանը։

Մասնագետի աչքով նայողը չի կարող չարձանագրել, որ ինչպես վերոհիշյալ աշխատությունները, այնպես էլ այս ժողովածուն լուրջ ավանդ են հայ ժողովրդի պատմության, ավելի ճիշտ աղբյուրագիտության բնագավառում։ Այստեղ զետեղված նյութերը պարզաբանում են Արևմտյան Հայաստանի 15—17-րդ դարերի սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող մի շարք խնդիրներ, նոր լույս սփռում հողային հարցի, թուրքական հարկային սիստեմի, ազգային ճնշումների քաղաքականության վրա։ Գրքի ընթերցումից հետո չես կարող չհամաձայնել պրոֆեսոր Թ. Հուլիաս Կումի այն կարծիքին, որն արտահայտել է Լ. Ֆեկետեի նմանատիպ «Թուրքական հարկերի գանձումը» աշխատության առաջաբանում. «Տարակույս չկա, — գրում է Թ. Հուլիաս Կումը, — որ վերոհիշյալ հարկերի գրանցման լույսի տակ Անատոլուի օսմանյան դարաշրջանի պատմությունը և Հունգարիայի թուրքական շրջանի պատմությունը բոլորովին տարբեր գույնով պիտի տեսնենք։ Այս տեսակետից առանց չափազանցության կարող ենք ասել, որ, օրինակ, Հունգարիայի հետ առնչություն ունեցող նյութերը, եթե պրոֆ. Լ. Ֆեկետեի նախագծով մշակվեն, ապա հնարավոր և անհրաժեշտ կլինի Հունգարիայի 16—17-րդ դարերի պատմությունը վերստին գրել։ Բնական է, որ Հունգարիայի թուրքական շրջանի պատմության մասին մեր այս տեսակետը վերաբերում է նաև Անատոլուին, Բալկաններին և առհասարակ Օսմանյան կայսրության բոլոր մասերին»։

Այս տողերին, հարկավ, պետք է ավելացնենք և այն, որ այսօրվա Թուրքիայի արխիվներում դարերի ընթացքում հավաքված և պահպանված անհամար «Կանուններամեների» ու ֆերմանների հրատարակությունից հետո հարկ կլինի վերաշարադրել նաև հայ ժողովրդի արևմտյան հատվածի ոչ միայն միջնադարի, այլև նոր շրջանի պատմությունը։ Դրա անառարկելի ապացույցը գրախոսվող ժողովածուի հաղորդած նորահայտ փաստերն են, փաստեր, որոնք հեղաբեկում են շատ հարցերի լուսաբանման մարզերը։ Թվարկենք դրանցից մի քանիսը։

Մինչև գրախոսվող ժողովածուի և Ա. Սաֆրաստյանի աշխատությունների լույս տեսնելը, հայագիտությունը արձանագրում էր Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող հողատիրության երեք ձևեր՝ պետական, մասնավոր, վա-

կուֆային։ Այժմ պարզ է դառնում, որ հողատիրական ինստիտուտը ավելի բարդ է եղել, քան կարծվել է։ Այս երեք ձևերը ստորաբաժանվել են տարատեսակների։ Եղել են հայ հողատեր ֆեոդալներ, ոչ տարածված ու թույլ ձևով հարատևել է ճորտության ինստիտուտը, երբեմն օրինականացվել է գյուղացիության կախվածությունը թուրք և քուրդ զինվորական ֆեոդալներից, բայց ոչ այն ձևով, ինչպես դա եղել է Արևմտյան Եվրոպայում կամ Ռուսաստանում։

Ժողովածուն նորություններ է պարունակում Թուրքիայի հարկային սիստեմի մասին։ Սուլթանական Թուրքիան մի երկիր էր, որի տիրապետող ու գերիշխող խավը բացարձակապես անարտադրող էր, և հարեմական մեղկ ու շռայլ կյանքի, անձնական վայելքների, ռազմական արշավանքների վրա ծախսվող մեծաքանակ գումարները ստանում էր հպատակներից՝ հարկերի ձևով։ Օրինական ու ապօրինի հարկերի դասական այդ երկրում ստեղծվել է հարստահարության մի այնպիսի ձև, որի նմանը դժվար է գտնել այլ երկրներում։ «Կանուննամեներից» մեր ստացած նորությունն այն է, որ Թուրքիայում հարկային միասնական սիստեմ գոյություն չի ունեցել։ Յուրաքանչյուր էյալեթ, յուրաքանչյուր գավառ ունեցել է տարատեսակ ու տարաչափ հարկեր, որոնց անուններն անգամ միմյանց չէին բռնում։ Ժողովածուն նյութ է տալիս ենթադրելու, որ հայ եկեղեցուց ու վանքերից ևս հարկ է գանձվել։ Դրանից հետևում է, որ միանգամայն սխալ է թուրքական պատմագրության մեջ լայնորեն տարածված այն կարծիքը, թե իբր այլազգի հոգևորականությունը ազատ է եղել հարկերից։

Ժողովածուն ակնհայտ է դարձնում նաև այն, որ հողատիրության ձևերն ու հարկային սիստեմը մշակելիս՝ վաչկատուն, ռազմատենչ օսմանցիները սկզբնական շրջանում զարգացման այնքան ցածր մակարդակ են ունեցել, որ չեն կարողացել նույնիսկ նոր օրենքներ ստեղծել և ստիպված օգտագործել են նախորդներից ժառանգած, մասնավորապես Ակ-կոյունլուների իշխանապետ Ուզուն Հասանի սահմանած կանոնները։ Այդ կանոններից բխող հարկերին նրանք ավելացրել են նաև սովորութային հարկերը և շարունակել ավելի անխնա կեղեքել հպատակներին՝ հատկապես այլակրոն ազգերին։ Արևմտյան Հայաստանի հարավային նահանգներում գործել են քրդական սովորութային «օրենքները»։ Այստեղ թուրքական արյունոտ շահագործմանը երբեմն փոխարինել է, երբեմն էլ գումարվել քրդա-ավշարական վերնախավի ծանր լուծը։

Ներկա ժողովածուն արտացոլում է հայ ժողովրդի իրավա-քաղաքական անտանելի կացությունը և մերկացնում թուրք պատմաբանների կեղծիքն այն մասին, թե միջնադարյան Թուրքիան «օրինականության», «արդարության» տիպար էր։ Ժողովածուի նյութերը այլևս ոչ մի կասկած չեն թողնում, որ այլազգիների քաղաքական ճնշումները ծայր էին առնում առաջին իսկ սուլթանների տիրապետությունից ի վեր։ «Օրենքներում» կետեր շատ կան, որ գրված էին միայն թղթի վրա։ Իսկ ինչքա՜ն չարաշահումներ ու ապօրինություններ էին կատարվում «օրենքից դուրս»։

Գրախոսվող ժողովածուն ունի նաև համառոտ առաջաբան և ընդարձակ ծանոթագրություններ։ Որպես թերություն պետք է նշել, որ ժողովածուի առաջաբանը սխեմատիկ է։ Հեղինակները այստեղ ավելի շատ արժեքավորում են ներկայացվող նյութը, քան վերլուծում այն։ Այսուհանդերձ, ժողովածուն կազմողները պատմաբանին, տնտեսագետին ու իրավագետին տվել են հարուստ փաստեր, որոնց գիտական արժեքը դժվար է գերագնահատել։

Թուրքերեն, արաբերեն ու պարսկերեն իմանալը կազմողներին հնարավորություն է տվել թարգմանել բազմաթիվ բարդ ու անհասկանալի բառեր, բացատրել գրեթե բոլոր հարկերի անունները, բացահայտել դրանց էությունը, չափերը, գանձման ժամանակաշրջանը։ Նրանք գուցե առաջին անգամ մեծ զգուշությամբ ու ճշտությամբ մշակել են Արևմտյան Հայաստանի պատմության անհրաժեշտ գիտական տերմինալոգիան։

ՀԱՅԿ ՂԱՋԱՐՅԱՆ